ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / jrahovit.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / , jrahovit.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 -րդ կետի դրույթներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2017թվականի համար Զրահովիտ համայնքում սահմանել տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատրության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար

ա/ Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում

այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15 000 դրամ

բ/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա./ 200-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30 000 դրամ

բ.բ./ 500-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000 դրամ

բ.գ./ 1000-3000ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000 դրամ
բ.դ./3000ք/մ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100 000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ Մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ:

դ/ 20 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների,

վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 135000 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եվ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

5) Համայնքի տարածքում

ա/բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղականտուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կենտերում հեղուկ վառելիք և /կամ/ սեղմված բնական կամհեղուկացված նավթային գազերի և

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 200 000 դրամ.

գ/ խանութներում , կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60 000 դրամ:

6)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ,

զ. 500 եւ ավելիք առակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ՝

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

ե. 200-ից մինչեւ 500 քառակուս իմետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետրընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

7) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի օբյեկտներին, ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է

ա/ առևտրի օբեկտների համար 25 000 դրամ:

բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներիհամար՝ 50 0000 դրամ:

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար 1 500 դրամ:

բ/ դատարկ գովազդային վահանակների համար 375 դրամ:

գ/սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

9) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

10) Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է յուրաքնչյուր մեքենայի համար 10 000 դրամ:

11) Համայնքի տարածքում

ա/ Համայնքի տարածքում շինարարության ավարտական ակտի ձեւակերպման համար, ինչպես նաեւ շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները սահմանել 5000 դրամ:

բ/ Աճուրդ-մրցույթի մասնակցության վճարը սահմանվում է 2 000 դրամ:

12) ա/Համայնքի յուրաքանչյուր բնակչից աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվահամար սահմանել 50 դրամ:

բ/Համայնքում գործող յուրաքանչյուր առևտրի օբյեկտից աղբահանության վճարը

յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 400 դրամ:

2.ա/ Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

բ/ Սույն որոշման 4- րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ,9-րդ և 10-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,3 գործակիցը:

Ուժը կորցրած ճանաչել համայնքիավագանու 12.12.2016թվականի թիվ 33 – Նորոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ջրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / jrahovit.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 7-Ն

ՋՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝ ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի 2017 թվականի վարչական բյուջեում կատարել փոփոխություն
Եկամտային մաս.

ա/ Ավելացնել ծխախոտի վաճառքի թույլտվության գումարը 20.0 հազ.դրամով
բ/ Ավելացնել խմիչքի իրացման թույլտվության գումարը 20.0 հազ.դրամով և այդ գումարներն ուղղել՝
Ծախսային մաս.
ա/01.6.1 գործառնական դասակարգման Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսագիտական դասակարգման Գործառնական և բանկային ծառայությունների 4211 հոդվածին 20.0 հազ.դրամ:

բ/ 10.7.1-ի գործառնական դասակարգման Սոցիալական հատուկ արտոնությունների, տնտեսագիտական դասակարգման Հուղարկավորության նպաստների 4726 հոդվածին 20.0 հազար դրամ:
Ծախսային մաս.
11.1.2-ի գործառնական դասակարգման Պահուստային ֆոնդի, տնտեսագիտական դասակարգման Պահուստային միջոցների 4891 հոդվածից պակասեցնել 1300.0 հազ. դրամ և այդ գումարն ուղղել՝

ա/ 01.1.1-ի գործառնական դասակարգման Օրենսդիր և գործադիր մարմինների, տնտեսագիտական դասակարգման էներգետիկ ծառայությունների 4212 հոդվածին 100.0 հազ. դրամ և Կապի ծառայությունների 4214 հոդվածին 100.0 հազ. դրամ :
բ/ 01.6.1 գործառնական դասակարգման Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսագիտական դասակարգման Հատուկ նպատակային այլ նյութերի 426 9հոդվածին 500.0 հազ.դրամ և Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների 4819 հոդվածին 50.0 հազ.դրամ:
գ/ 06.4.1 գործառնական դասակարգման Փողոցների լուսավորության, տնտեսագիտական դասակարգման էներգետիկ ծառայությունների հոդվածին 200.0 հազ.դրամ և Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման 4251 հոդվածին 50.0հազ.դրամ :
դ/10.7.1-ի գործառնական դասակարգման Սոցիալական հատուկ արտոնությունների, տնտեսագիտական դասակարգման Հուղարկավորության նպաստների 4726 հոդվածին 100.0 հազ. դրամ և Այլ նպաստների 4729 հոդվածին 200.0 հազար դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱՋԱՐՅԱՆ